

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Կ. ԵՋԵՆ, ¹⁾ ՊԵՏՐՈՍ ՄԵԺԻ ՅԱՐԱԲԵՐՈՒ- ԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱՋԳԻ ՀԵՏ.

Վաւերաթղթեր, հանուած Մոսկուայի գլխաւոր
և Ս. Պետերբուրգի արտաքին գործոց նախարա-
րութեան դիւանից, Աւստրիական պալատական և
արքունի դիւանից, Բաւարիոյ թագաւորութեան
գաղանի արքունի դիւանից և այլ հաստատու-
թիւններէց:

„ ... որ Մենք այդ Հայոց ազգը Մեր կայսերական
„ առանձինն ողորմածութեամբ եւ պաշտպանութեամբ
„ տակն ենք ուռնի:“

Նոյեմբ. 10. 1724 թ.

ՊԵՏՐՈՍ

(Զեկուցած է կայսերական գիտութեանց սեմարանի պատմական-
քանասիրական դասնի միստոս 8 յունուարի 1897 թ.)

Ս. Պետերբուրգ. 1898. տպգր. գիտ. ձեմարանի:
Մեծադ. 8⁰. Երես 149 + 512. գինն է 5 ռ.:

Քննադատութեան նպատակով չէ որ գրիչ ենք առնում
այս վերին աստիճանի ժամանակակից և թանգագին աշխա-
տութեան մասին գրելու, առ այժմ մի առաւել համեստ և
գործնական նպատակ ունինք. կամենում ենք «Լուսայ»-ի ըն-
թերցողներին մի ըստ կարելոյն ամփոփ զեկուցմամբ ծանո-

¹⁾ Г. А. ЭЗОВЪ. Сношеніе Петра Великаго съ
Армянскимъ народомъ. Документы, извлеченные
изъ Московскаго главнаго и С.-Петербургскаго Архивовъ

Թացնել այս ընդարձակածաւալ և շահագրգիռ գրքի հետ: Հայոց ազգի պատմութիւնը մշակուած և հանրածանօթ պատմութիւններից է, ո՛չ միայն օտարազգիք, այլ մերայինք անգամ անծանօթ չեն այն դերին, որ խաղացել է հայ ազգն իւր պատմական կեանքի երկար ընթացքում. բաւական է յիշատակել միայն, որ հայ ազգն երեք պատմական դարաշրջաններում ևս յատուկ կեանք է ունեցել, յարաբերութեանց մէջ է եղել աշխարհիս բոլոր քաղաքակիրթ ազգերի հետ, որոշ ազդեցութիւն է ունեցել պատմական հոսանքների շատ ընթացքների վրայ, սակայն դեռ չէ ունեցել իւր պատմագիրն ու բնութեան բովից ելած պատմութիւնը: Մեր պատմահօր ճշմարիտ և ոսկէտառ սահմանը հայոց պատմութեան դեռ ևս իւր ամբողջութեամբ ապացուցուած չէ. «Ձի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն ըագում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի»¹⁾ Այս ճշմարտութիւնն ապացուցանող երեսներից մէկին է նուիրուած ահա այս գիրքը, որ պէտք է զարդ լինի ամենայն մի հայ մարդու մատենադարանի:

Եթէ հայոց հին պատմութիւնն իւր վիպասանական ձևով քիչ թէ շատ հանրածանօթ է, նորագոյնը սակայն գլխովին անծանօթ է, մեր յիշողութիւնը հազիւ հասնում է մեր պապերի ժամանակին, բայց ոչ նախահաւերին, որոնք կեանքի կռուի մէջ մի փառաւոր պատերազմ են մղել: Քա-

министерства иностранныхъ дѣлъ, Австрійскаго придворнаго и государственнаго архива, Королевско-Баварскаго тайнаго государственнаго архива и другихъ учреждений.

„... Поноже Мы оной Армянской народъ въ „ особливую Наму Императорскую милость и „ протекцію приняли“. Ноября 10 дня 1724 г.

ПЕТРЪ.

(Доложено въ засѣданіи Историко-Филологическаго отдѣленія Императорской Академіи наукъ 8 Января 1897 г.)

С.-Петербург. 1898. ст.СХLIX+512. 8^о.

¹⁾ Մովսէս Խորենացի. գիրք Ա. գլ. Գ.

նի՞սն արդեօք մեղանից տեղեակ է իսկութեամբ այն վիճակին, որ նախընթաց է եղել մեր այսօրուան դրուժեան, որի կատարեալ ճանաչողութիւնից սակայն կախումն ունի մեր ապագայ կենսունակութիւնը: Եթէ մեր անցեալ սերունդը կրթուած լինէր իւր մերձաւոր անցեալի սկզբունքներով և մեղ կատարեալ ագիտութեան մէջ շօթողներ այս մասին, այժմ թերեւ մենք աւելի երջանիկ լինէինք: Այս գիրքն ընթերցողը կը տեսնէ պատմութեան հայելու մէջ այն մեծ վիհն, որ բաժանում է մեզ մեր անցեալից, սակայն ի՞նչքան քիչ ժամանակ է անցել այդ վիհը գոյանալու օրուանից, ընդամենը երկու դար միայն:

Ա.

Նախ մի արտաքին ծանօթութիւն գրքիս մասին: Այս մեծագիր հատորը բաղկացած է չորս մասից. 1) Ներածութիւն, պատմական տեսութիւն, ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների հայոց աղգի հետ. եր. I—CXLV. 2) ցույցակ ներածութիւն կազմելու համար գործ դրուած շարագրութիւնների եր. CXLVII. 3) վաւերաթղթեր երես 1—462. 4) յաւելուածներ երես 465—512.

Ներածութիւնը բաղկացած է 22 գլխներից, որոնց մէջ հեղինակը նկարագրում է Վրաստանի, Հայաստանի և Պարսկաստանի վիճակը մինչև 1858 թուականն և ապա տալիս է վաւերաթղթերից հանուած և ժամանակակից աղբիւրներից բաղուած հայոց շարայարեալ պատմութիւնը մինչև մեր օրերը: Առանց այս ընդարձակ լուսաբանութեան միայն վաւերականների հրատարակութիւնը կը թողնէր մեզ միայն մէջ և ապագայ պատմագիրն ստիպուած կը լինէր շարադրեալ պատմութիւն տալու համար վերսկսելու աշխատութիւնը. այժմ այդ աշխատութիւնն արդէն կատարուած է և մենք վաւերաթղթերի հետ միասին ունինք և մի մշակուած պատմութիւն այն ժամանակի, որին վերաբերում են վաւերաթղթերը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այսու դեռ վերջացած չէ համարում պատմական քննադատութեան գործն և ապագայ պատմագիրն քննութեան շատ խնդիրներ են մնում, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք պատմա-

կան հայեցակէան, որ այլ կարող է լինել հայ պատմագրի համար քան թէ այն հայեցակէան, որ ունի Պետրոս Մեծի և ռուսաց կառավարութեան հայոց հետ ունեցած յարաբերութիւնների պատմագիրը: Հայկական պատմագրի հայեցակէան, որով և ամբողջ պատմութեան վերջնական խմբագրութիւնը մեծ կախում կ'ունենայ այն դեռ ևս անծանօթ աղբիւրներից, որոնք պէտք է գոյութիւն ունենան ժամանակակից յիշատակարանների, վաւերացումների և մելիքների տանց աւանդութիւնների մէջ:

Գրքիս գլխաւոր բաժինը կազմում են վաւերացումները, որոնք գրուած են 1698 թ. մայիսի 3-ից մինչև 1736 թ. մարտ ամիսը, այսինքն 38 տարուան շրջանում, որոնք թուով 305 են, գրուած լատիներէն, ֆրանսերէն, ռուսերէն, հայերէն, գերմաներէն, իտալերէն և թուրքերէն լեզուներով, բաւական թուով վաւերացումներ զետեղուած են իրենց հին ու նոր ռուսերէն թարգմանութիւններով: Ամենից առաւել գրական ձև ունեն և բերականութեան դէմ չեն մեղանջում լատիներէն ու ֆրանսերէն լեզուով գրուածները, գրեւորական լեզուով, անգրագէտ մինչև անգամ անհասկանալի լեզուով են գրուած հայերէն և ռուսերէն թղթերը, նոյնը կարելի է ասել և գերմաներէնի վերաբերմամբ: Այս վաւերացումներն առանձին հետաքրքրութեամբ արժանի են լեզուագիտական-բանասիրական տեսակետից, որովհետև գրուած են մի այնպիսի ժամանակ, երբ ռուսերէնը նոր էր սկսում գրուել, հայերէն աշխարհաբարը դեռ գրութեան լեզու չէր. իսկ գերմաներէնը նոր էր գրականութեան մէջ գործ դրւում: Այսպիսով այս ժողովածուն դառնում է մի տեսակ գանձարան նորագոյն գրական լեզուների առաջին փորձերի համար: Հայերէն վաւերացումները բացի դրանից մի այլ առաւելութիւն ևս ունեն, դրանք արտայայտիչ են ժամանակակից արեւելեան գաւառաբարբառների: Վաւերացումների հին թարգմանութիւնները բոլորն ևս անձիշդ են, բայց նա մանաւանդ ռուսերէնները:

Առանձին հետաքրքրութեան արժանի են և յաւելւումները. ա) գիրք գ. գլ. ա. և բ. «Պարսից շահ Արքաս թագաւորի ընդդէմ տաճկաց Մահմէդ և նրա որդի Ահմէդ սուլթանների մեծ պատերազմների և յաղթութիւնների

պատմութիւնը. Անտուան Գուլէա եպիսկոպոսի, որ ժամանակակից է իւր պատմած իրողութիւնների և ականատես: Այս երկու գլուխ նկարագիրն հայ ազգի տառապանքների Շահարասի ժամանակ լրացնում և ճշդում է Առաքել Դաւրիթեցու աւանդածները: 2) Քրանսիացի Սէն-Մարտէն ականաւոր հայերէնագետի զեկուցագիրն Հայաստանի ուսումնասիրութեան մասին, որ նա Ալէքսանդր Փօն Հումբոլդի միջոցով Նիկողայոս Բ. կայսեր էր ներկայացրել ¹⁾:

Գրքիս գործածութիւնը մեծապէս դիւրացնում են խնամով կազմած ցանկերը, որ երեք են. ա) վաւերականների ցանկ գրքի սկզբում (եր. Ա—ԺԶ), բ) ցանկ յատուկ աւելումների (հայերէն) եր 481 488. գ) ցանկ յատուկ աւելումների ուսերէն և եւրոպական լեզուներով 489—512: Հրատարակութեան արտաքինի մասին մեր խօսքն աւարտած կը լինինք, եթէ աւելացնենք, որ տպագրութիւնը մեծ խնամքով է կատարուած, թուղթն ու տիպը գեղեցիկ են և զերծ տպագրական թերութիւններից, ափսոս միայն որ հայերէն տառերը շատ հին ձևի են: Ծանօթանալք արդ գրքի բովանդակութեան հետ:

Բ.

Լոկ վաւերացութիւնը պատմութիւն չեն կազմում, նրանք իսկական պատմութեան հաւատարմացուցիչ վկաներն են. պատմագրութիւնն ու վաւերացութիւնը միմեանց լրացնող աղբիւրներ են, ուստի և առանձին շնորհակալութեան արժանի է մեծարոյ հեղինակն, որ մանրակրկիտ հետախուզութեամբ ի մի է հաւաքել ժամանակակից պատմական աղբիւրների վկայութիւնն իւր համալից ներածութեան մէջ: Հետևենք քայլ առ քայլ հեղինակին:

Հրատարակուած վաւերացութիւնն սկսում են 1698 թ. մայիսի 3 ից, իսկ հայոց այս նոր յարաբերութիւնները եւրոպական բրիտոնեայ տէրութիւնների հետ սկիզբն են աւելում այն ազգային գաղանի ժողովից, որ տեղի ունեցաւ 1678 թ. Ս. Էջմիածնում, Յակովբ կաթողիկոսի նախագահութեամբ: Այս ժողովն եղաւ հայոց ազգի ապագայ

¹⁾ Այս երկու յաւելումների թարգմանութիւնները տես «Լուսաշինի» ներկայ համարումը:

Ճակատադրի որոշողն, ամիսո՞ւս սակայն որ մեզ անծանօթ են այդ ժողովը նախապատրաստող հանգամանքներն, որոնց վերաբերութեամբ այժմ միայն հաւանական ենթադրութիւններով պիտի գոհանանք: Այդ հաւանական ենթադրութիւններին հասնելու համար, պիտի ծանօթանանք այն ժամանակին:

Ցասն և եօթներորդ դարն սկսեալ է մի մեծ պատմական իրողութեամբ, որ հետզհետէ իւր կատարման դիմելով վճռող ազդեցութիւն պիտի ունենայ հայոց ազգի կեանքի համար: Այդ իրողութիւնն է Ցաճկաստանի անկման սկզբնաւորութիւնը, որ սկսելով տասն և եօթներորդ դարուց շարունակուով է մինչև մեր օրերն և դեռ պիտի շարունակուի առաջիկայ դարում ևս:

Մինչև Պարսկաստանում Սեֆեան տան թագաւորելը արեւելքում տիրապետող էր տաճկաց զօրութիւնը. Պարսկաստանին պատկանող հայկական նահանգներն անգամ ընկել էին տաճիկների ձեռքը, որոնք ձգտում էին իրենց տիրապետութիւնը մինչև Կասպից ծովն հասցնելու: Սեֆեան հարստութեան թագաւորներն իրենց տիրապետութիւնը Պարսկաստանում հաստատելուց յետոյ սկսեցին վերականգնել տէրութեան նախկին սահմաններն, որոնց մէջ էին Ադերբեջանի, Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի և Խոյի նախկին խանութիւնները, որոց վրայ իշխող թուրքմէն իշխաններն անուանական կերպիւ ճանաչում էին երբեմն պարսից, երբեմն տաճկաց գերիշխանութիւնը, շատ անգամ ևս անկախ էին բոլորովին: Սեֆեան տան հզօրագոյն միապետը Շահ Աբբաս (Ա) մեծն էր, որ թագաւորեց 1585—1628 թ. սաինքն էր ահա, որ կրկին գրաւեց Հայաստանն ու Արաստանը (1602—1617 թ.) և հասցրեց Պարսկաստանի սահմանը կրկին մինչև Կովկասեան լեռները: Պարսկական և տաճկական տիրապետութիւնների սահմանը Շահ Աբբասից սկսած որոշուած էր, թէպէտ և ժամանակաւոր խանգարումներ շարունակ տեղի ունեցան մինչև ռուսական տիրապետութեան օրերը: Նոյն տասն և եօթներորդ դարու վախճանին տաճկաց զօրութիւնը սկսաւ նուազիլ Եւրոպայում, 1699 թ. Կառլովիացի դաշնադրութեան օրուանից մինչև մեր օրերը տաճկաց տէրութիւնը հետզհետէ կորցնում է իւր տիրապետած երկրները: Շահ Աբբասը թէպէտ և միանգամից վե-

րականգնեց պարսից տէրութեան հին փառքը և ընդարձակեց նորա ուսմանները, բայց նրա յաջորդներից և ոչ մէկը կարող չեղաւ տեւական դարձնելու այդ փառքը և Պարսկաստանն էլ զուգընթացաբար իւր հարեանին դիմեց դէպի անկումն, որ միայն շնորհիւ այդ երկրի աշխարհագրական դիրքին ահա բաւական ժամանակ է կանգ է առել:

Տիրապետող զօրութիւնների անկումն ամենից շուտով յայտնուում է ընկճուած ազգերին, որոնք թուլութեան առաջին նշաններիցն արդէն խրախուսուում են և սկսում են անկախութեան ձգտումներ յղանալ: Այդպիսի մի նշանսւոր միտք յղացան հայերը 1678 թուին և անմիջապէս ձեռնարկեցին այդ մտքի իրագործման: Ս. Էջմիածնի ժողովը 1678 թուին նախապատրաստեց Կովկասի սզատութիւնը մահմետական լծից: Թէ ի՞նչ էր այդ լուծը և ի՞նչպէս էր նա ծանրանում քրիստոնեաների պարանոցին նկարագրել են մեղ ժամանակակից հայ պատմագիրները, Առաքել Դավրիժեցին, Եսայի կաթողիկոսը և բազմաթիւ այլ ժամանակագիրներ և յիշատակագիրներ, Եւրոպայի ճանապարհորդներն ինչպէս՝ Շարդէնը, Ցավերնիէն, Տուրնէֆորը, կաթողիկ քարոզիչները, Գուլէան, Ռաֆայէլ դը Մանս, Սանսոն, Ֆիզվերոն, Կրուսինսկի և այլք: Այս առատ պատմական աղբիւրներից մեծարոյ հեղինակն մի հակիրճ և ամփոփ պատմութիւն է հիւսել Շահաբբասի ժամանակներից սկսած մինչև մեր դարը, մի պատմութիւն որ դեռ ևս գրուած չէր, որովհետև Միքայէլ Չամչեանը տասնեութերորդ դարու հայոց պատմութեան փոխանակ սիրով և ախորժանօք պատմում է կաթողիկական երկպառակման զգուշի պատմութիւնը: Յայտնի է միանգամայն և այն տխուր փաստը, ուր այդ երեւելի հայ պատմագրից յետոյ մինչև սյսօր մենք դեռ ևս այլ պատմագիր չենք ունեցել, որ անցեալ և այս դարու հայոց պատմութիւնը գրէր: Իրաւ է, հատու կտոր աշխատանքներ ձեռնարկուած են և մեր ամսագիրների ու լրագիրների էջերում կան նիւթեր հրատարակուած այդ հետաքրքրական շրջանի մասին, բայց ամբողջական պատմութեան դեռ չէ ձեռնարկուած: Ռուսաց տէրութեան հետ հայոց ազգի ունեցած յարաբերութեանց վերաբերեալ վաւերացումների

հրատարակչին է պատկանում այս պատմութեան առաջին լուսարանութեան փառքը:

Առիթից օգտուելով ծայրաքաղ ենք անում այս մի դարու պատմութիւնը հետեւելով պ. Եղեանին, որովհետեւ ցաւօք սրտի պիտի խոստովանենք, որ շատ հայերի համար մեր անցեալ դարու պատմութիւնը *terra incognita* է: Պետոս Մեծի յարաբերութիւններն սկսում են պարսից հետ շահ Հիւսէյնի ժամանակ, ուստի ներածութեանս մէջ համառօտ նկարագրուած է Շահաբքասից մինչև շահ Հիւսէյն և ապա այս շահի անկումն (1722 թ.) և Պարսկաստանի խռովութիւնները. իսկ որովհետև հրատարակուած վաւերացումները գլխաւորաբար հայոց և վրաց են վերաբերում, ուստի առանձնապէս նկարագրուած են այդ երկու ազգերի վիճակն և ունեցած մասնակցութիւնը մահմետական լուծը թօթափելու համար: Այս նկարագրութեան էնուիրուած ներածութեանս Բ գլուխը, որ կարեւոր ենք համարում այսանդ համառօտելու:

Գ.

Պարսից ժամանակը Վրաստան էր կոչւում Գարթալինեան և Վախէթը, իսկ Իմերէթը, Մինգրելիան և Գուրիան, ինչպէս նաև Աբխազիան ունէին իրենց ժառանգական իշխանները, որոնք Ցաճկաստանի ազդեցութեան և երբեմն իսկ գերիշխանութեան տակ էին: Գարթալինիայի և Վախէթու երկիրներն երբեմն միացած մի խանութիւն էին կազմում, իսկ երբեմն առանձին նախարարութիւններ, այս երկրների վրայ պարսից թագաւորը նշանակում էր հին վրաց արքայական ցեղից իշխաններ, որոնք կոչւում էին Գիւրջի խան, սրանք պէտք է անպատճառ մահմետական լինէին, ժամանակակից ճանապարհորդներ Տուրնըֆորն և Ցավերնիէն հաստատում են այդ արդէն յայտնի փաստը: Վրաց թագաւորների ժառանգները հաւատաւորն էին լինում դիտաւորութեամբ, որպէս զի իշխեն իրենց հայրենի երկրին: Վրաստանի խանը միւս պարսիկ խաներից ոչ մի կերպիւ չէր զանազանւում, նա ևս պարտական էր իւր զօրքով (40,000) շահի բանակում ծառայելու, ինչպէս միւս խաները, նրա որդիքն ու

մերձաւոր ազգականները պիտի պատանդ մնային շահի պա-
լատում, ուր նրանք մահմետականութիւն էին ընդունում և
յաճախ ներքինացւում: Պարսից թագաւորների անկեալ չըր-
ջանում խաներն իրաւունք ունէին դրամ կոխելու շահի ա-
նուամբ, նոյն իրաւունքն ունէր և Գիւրջի խանը, այդ նոյն
իրաւունքը պարսից Թահմասպ շահը տուել էր և Հալի ձորի
Շայ Հերոսին, Դաւիթ բէգին: Սէֆեան շահերի ժամանակ,
մահմետական վրացիք մեծամեծ պաշտօններ ունէին Պարս-
կաստանում, Շահաբբասը չէր հաւատում պարսիկներին,
ուստի մայրաքաղաքի կառավարիչը գրեթէ միշտ վրացի էր
լինում, ինչպէս նաև բուն Պարսկաստանի ներքին գաւառ-
ների, որովհետև պարսիկների և վրացոց մէջ եղած ատե-
լութիւնը թոյլ չէր տալիս նրանց միանալու շահի ընդդէմ,
ահա թէ ինչո՞ւ շահերը իրենց ապահովութեան համար
չըջապատում էին իրենց վրացիներով: Շահերի հարեմը լի
էր վրացի գեղեցկուհիներով, պարսից մէջ միշտ այժմս էլ
առակաւոր են վրացի գեղեցկուհիք (գիւրջի-գէօղելի), ո-
րոնց ժողովում էին տարեցտարի 6—7 տարեկան հասակում,
հաւատաւորն անում և պատրաստում հարեմների համար:
Այս վիճակն այնքան բնական էր համարւում, որ վրացի
ազնուականներն առւարի նիւթ էին դարձրել իրենց ազը-
կանց, նրանք երբեմն վաճառում էին այդ անմեղ մանուկ-
ներին, յաճախ ևս իրենք տանում էին պարգև շահին, որ
նրանց պաշտօններ էր տալիս կամ մեծաբանակ դրամ ¹⁾:
Փառքի և հարստութեան հասնելու երկու միջոցներն էին
այդպիսի խնամութիւնները և հաւատաւորութիւնը. այս եր-
կու միջոցներիցն էլ օգտւում էին վրացիք և չը նայելով
որ վրացիք համեմատաբար ուշ էին ընկել մահմետական լծի
տակ և իրենց երկրի բնական դիրքի շնորհիւ աւելի ազատ
են եղել մահմետական ճնշումներից, այսու ամենայնիւ ան-
ցեալ դարու սկզբում 10—12 հազար վրացի մահմետական
ընտանիքներ կային Քարթալինիայում և Կախէթում: Այս
հաւատաւորն վրացիք շատ աւելի ահռելի էին քրիստոնէից

¹⁾ „Il y a de cette lâche noblesse, qui mène elle même
ses plus belles filles au roi la recompense qu'on leur
donne est une pension ou un emploi“. Chrsdin II. 67.

համար և իբրև նորահաւատներ, աւելի անողորմ և ջերմ-
աւանդ, Շահաբբասի սիրելի Ամիր Գիւնէ խանը, Հայաստա-
նի աւերիչը, որ հին Զուղան քանդեց և Արարատեան աշ-
խարհն անապատ դարձրեց, մի հաւատաւորն վրացի էր։
Բացի վրացի մահմետականներից վրաստան էին գաղթեցրած
բազմաթիւ պարսիկներ փոխանակ այն 80 հազար գաղթա-
կանների, որ հանել էր Շահաբբասը վրաստանից և բնա-
կեցրել Պարսկաստանում։ Ինքն իրեն մի համեմատութիւն
ստիպում է մեզ այս երկու ազգերի դիմացկունութիւնը չա-
փելու, նոյն Շահաբբասը փոխադրում է Պարսկաստան, 80
հազար վրացի և 60 հազար հայ։ Հայերից տեղ են հաս-
նում մի երրորդը, վրացիներից շատ աւելի մեծ բազմու-
թիւն, բայց սրանք ձուլւում են և կորչում, իսկ հայերը
մի երկու դար փառաւոր կեանք ունենալուց յետոյ ցայսօր
իսկ պահպանում են իրենց գոյութիւնը։ Այս ոչ աննշան
փաստն ևս հաստատում է վրացիների քաղաքակրթական
ձուլումն պարսիկների հետ, որ այնքան վառ գոյներով նկա-
րագրում է Քրանսիացի Շարլէն Ճանապարհորդը։ Շարլէ-
նը լուրր Քրանսիացի Ճանապարհորդների մէջ սրատեսն ու
հիմնաւորն է, նա գրեթէ անգլիացի նշանաւոր Ճանապար-
հորդներին է նման իւր սուր դիտողութեամբ, ուստի նրա
ուղեւորութեան նկարագիրն մեծ պատմական արժէք ունի
անցեալ դարու պատմութեան համար։ Յարգելի հեղի-
նակն իւր գրքի մէջ յառաջ է բերում վրացոց բարբ ու
վարքի նկարագրի մի մասն Փրանսերէն բնագրով, որի հայ-
երէն թարգմանութիւնը կարեւոր ենք համարում դնել այս-
տեղ, ափսոսալով որ այս առիթը շատ անձուկ տեղ է տա-
լիս մեզ այս վերին աստիճանի հետաքրքրական ուղեգրու-
թիւնից աւելի երկարօրէն օգտուելու։ Պէտք է խոստովա-
նենք, որ նրա դատողութիւնը վրացոց մասին շատ խիստ է,
բայց կատարելապէս ճշմարիտ, նոյն անձն չէ սիրում և
հայերին, ատում է նրանց իբրև հերձուածողներ, սակայն
չէ զլանում և խոստովանելու հայերի արժանիքը։ Ահա
Շարլէնի խօսքերը վրաց մասին. «Նրանք են խաբեբայ,
խարդախ, ուխտադրութ, դաւաճանող, ապերախտ, ամբար-
տաւան ¹⁾։ Նրանց անամօթութիւնն անծայր է, երբ ուրա-

¹⁾ „Ils sont fourbes, fripons, perfides, traitres, in-

նում են իրենց ասածն և արածն, երբ յառաջ են տանում և պնդում են ստուծիւններ, երբ պահանջում են առաւել քան թէ իրենց պէտք է հասնի, երբ ստեր են յօդում և երբ շողոքորթում են: Նրանք անողոք են իրենց ատելութեան մէջ, և չեն ներում երբեք: Բացի այս հոգեկան մոլութիւններից, նրանք ունին զգայական մոլութիւններից ամենակեղտոտներն, հարբեցողութիւն և բղջախոհութիւնը (luxure): Նրանք ևս առաւել լողում են այս աղտոտութեանց մէջ այն պատճառով, որ այդ աղտոտութիւններն ընդհանուր են և ոչ մի կերպով անպատուաբեր Վրաստանում: Եկեղեցականներն էլ աշխարհականների պէս հարբում են և պահում են իրենց մօտ սիրուն ստրկուհիք, որ իրենց հարձերն են: Ոչ ոք չէ գայթակղում դրանով, որովհետեւ սովորութիւնն ընդհանուր է և նոյն իսկ թոյլատրեալ¹⁾: Բացի այս հատուածից Շարդէնի ուղեգրութեան մէջ շատ աննպաստ վկայութիւններ կան վրաց ազգի մասին, որ թերեւս բացատրուի այս ճանապարհորդի յատուկ ատելութեամբ դէպի այդ ազգն, որի ներկայացուցիչներն այն ժամանակ ամենուրեք կարող էին ներգութիւն պատճառած լինել Շարդէնին, սակայն սա ինքը բացատրում է այս երեւոյթների բնական պատճառն և սյլ ուղեւորներն ևս հաստատում են նրա ասածները: Բոլորովին ճշմարիտ են Սանսոնի խօսքերը վերաբերութեամբ վրաց քաղաքական դիրքի. «շահի քաղաքականութիւնը վրաց վերաբերութեամբ հրաշալի է, որովհետեւ եթէ սրանք միաբան լինէին, մեծ դժուարութիւններ կարող էին յարուցանել շահի համար: Թագաւորը կարողանում է նրանց բաժանուած պահել շնորհիւ շահերու: Նա առաջ է քաշում բոլոր մեծ իշխաններին այնքան մեծ առաւելութիւններով, որ նրանք մոռանում են իրենց հայրենիքը և կրօնը շահին մերձաւոր լինելու համար: Տէրութեան ամենամեծ պաշտօններն այսօր նրանց ձեռքին են, և նրանք, որ պաշտօն չունին, սեղանակից են արքային, արքունի գանձարանից են ծախսում և վայելում են թագաւորի հիւրերի, սեղանակիցներին յա-

grats, superbes“.

¹⁾ Chardin T. II. p. 62.

տուկ առաւելութիւնները ¹⁾։

Այս վիճակի մէջ էր վրաց ազգն երբ պարսից տիրապետութիւնն սկսաւ թուականաւ, այն ժամանակ տաճիկները ըսկըսան դիմել դէպի արեւելք և կամենում էին Վրաստանը գրաւել, իսկ բնիկ իշխանները երկպառակութեամբ և անընդհատ կռիւներով երկիրն էին քանդում։ Գիւրջի-խաները երեւելի էին իրենց անհաւատարմութեամբ, հէնց որ զգում էին իրենց գլխին ծանրացող ձեռքի թեթեւանալն, իսկոյն անկախ էին հրատարակում իրենց, այսպէս իւրաքանչիւր շահի մահուանից յետոյ ապստամբ էր Վրաստանն, իսկ նոր շահի առաջ խոնարհ հպատակ։ Այս հանգամանքներում պարզ է, որ իւրաքանչիւր շարժումն ընդդէմ պարսից տէրութեան, պէտք է վրդովէր և Վրաստանի խաղաղութիւնն և իւրաքանչիւր լծից ընդ վղող հպատակ կարող էր յոյս դնել վրաց խանի աջակցութեան վրայ։ Նոյնն արին և հայերը, Ս Էջմիածնի ժողովում անշուշտ, այդ երևում է № 1 վաւերացութիւնը։ Վրաց դերն այս բանադնացութիւնների և ապագայ ազատութեան գործում թողնելով, տեսնենք հայոց վիճակն ու գործի ձեռնարկելու հանգամանքները։

Գ.

Հայերը շատ աւելի վաղ էին կորցրել իրենց անկախութիւնը, Հայաստանը իւր անբախտ աշխարհագրական դիրքի պատճառով անընդհատ ասպարէզ էր պատերազմների և արշաւանքի, հայ բնիկ իշխանութիւնները ջնջուել էին ամենուրեք բացի հիւսիս արեւելքից, Ղարաբաղից (Գանձակի նահանգի Շուշի, Զանգեզուր, Զուանշիր և Ջիբրայիլ գաւառները), ուր դեռ ևս գոյութիւն ունէին մելիքները կամ ժառանգական գաւառատէրերը, որոնք առ երևոյթս հպատակում էին Նախջուռնի և Գանձակի խաներին։ Հայոց դժբախտութիւններից մէկն էլ նրանց ցրիւ լինելն էր և խառն բնակչութիւնը մահմետականների հետ։ Թատագդին ծանօթութիւններ ենք գտնում հայ բնակչութեան մասին այն ղեկուցագրերի մէջ, որ Օրին ներկայացրել է եւրոպական իշխան-

¹⁾ Sanson. p. 116.

ներին և Պետրոս Մեծին, բայց այդ մասին այլ առթիւ: 2ը նայելով այս ողբոյն վիճակին կար մի կապ և միութիւն. այդ կապն էր հայրենի հաւատն և այդ միութեան կենդանունը Ս. Էջմիածինը: Մահմետականների ընդհանուր ատելութիւնն առաւել և ամրապնդում էր այդ միութեան կապը, հալածութիւնները ամենուրեք ձեռք էին մեկնում միմեանց: Կաթողիկոսական աթոռի վերստին Էջմիածնում հաստատուիլը ԺԵ. դարում սկիզբն էր հայ ազգի ժողովման, ինչքան էլ թշուառութեան հասած լինէր հայ ազգն, այսու-ամենայնիւ մեծ բան էր նրա համար, որ մի կենդան և մի ընդհանուր հայր էր ճանաչում: Երևի այդ զգացել էր մեծ Շահարբաբը, որ Ս. Էջմիածնի բարերն անգամ Պարսկաստան էր փոխադրել տուել: Յիմա՛ր ցնորք պարսիկ բռնաւորի. հայի սիրտը ո՛չ Էջմիածնի բարերի հետ էր կապուած և ոչ նոյն իսկ Էջմիածնի, այլ նրա գաղափարի, ապացոյց դրան այն թշուառ ժամանակի թշուառագոյն հայրապետի պատմութիւնը: Թէպէտ և Էջմիածինը հասաւ վերին աղբա-տուութեան և կաթողիկոսութիւնը վերին ծայր անարգութեան, այնպէս որ Էջմիածնի դահակալները երևանի խանի ձեռքին խաղալիկ էին և պարսից խաների ու շահերի ծառաների ձեռքին կինդանի նահատակներ, բայց Էջմիածնի գաղափարը, կամ ինչպէս պատկերօրէն ասում է պատմիչը Ս. Գրիգոր լուսատուի աջը, որի վրայ կապուած է ընդ որ հայ ազգն, կենդանի մնաց և առիթ եղաւ մահմետական լծի խորտակման, ինչպէս այդ գիտէ իւրաքանչիւր պատմութեան տեղեակ անձն: Այս վաւերաթղթերի շրջանում Էջմիածնի կաթողիկոսներն էին Յակովբ Դ. (1655 թ.—1680), Եղիազար (1682—1691), Նահապետ (1691—1705), Ալէքսանդր (1701—1714), Աստուածատուր (1715—1729), սրտնցից առաջինն էր ազատութեան միտքն յղացողը և 1678 թ. գաղտնի ժողովի նախագահն ու ընտրեալ պատգամաւորը: Յաջորդ կաթողիկոսներն ամենքն ևս համակիր էին այդ գործին, բայց մասնակցութիւն ունենալ չըկարողացան, դրանց տեղը բռնեցին ապագայում Գանձասարու կաթողիկոսները: Շնորհիւ այդ միութեան գաղափարի օտեղծուեցաւ այս կաթողիկոսական աթոռն, իսկ երբ Էջմիածինը կրկին սկսաւ իւր դերը կատարել, Գանձասարը կորցրեց իւր գոյութեան

իրաւունքը՝ նոյնը կրկնուել է մեր պատմութեան մէջ մի քանի տեղամ:

Ցամաքագիտաց և տամնոթներորդ դարերումն ուրեմն հայոց վիճակը Պարսկաստանում հետեւեալն էր, հին Հայաստանի հիւսիսարևելեան անկիւնը դեռ միակն էր, որ կառավարուում էր իւր բնիկ հայ իշխաններով, այս երկիրը միակն էր բոլոր հայ գաւառներից, ուր դեռ կար հայ զինուորութիւն, ուր կենդանի էր և անկախութեան յոյսը: Արարատեան աշխարհն իւր Մայր-Աթոռով աւերակ և ողորմելի վիճակի մէջ էր, հայ բնակչութեան թիւը նուազել էր, հայերը՝ սարուկ օտար բռնակալների և շրջապատուած անհաւատներով՝ անասելի տառապանքների մէջ էին, նոյնն էր և պարսկահայքի վիճակն, իսկ բուն Պարսկաստանում, մայրաքաղաքին կից դեռ ծաղկում էր հայ գաղութը, նոր-Ջուղան, որից դուրս եկած վաճառականները միջնորդ էին արևելեան և արևմտեան աշխարհների, Երկրի անկախութեան յոյսը միայն Ղարաբաղում էր վառ, այս ձգտման ի ծածուկ նպաստում էին թէ Արարատցիք թէ Պարսկահայք: Յետեսական կողմից լաւ վիճակ ունէին միայն Ջուղայեցիք, միւս հայերը ոչ անձի և ոչ ստացուածքի ապահովութիւն ունէին, Ջուղայեցիք ևս առաւելութիւն ունէին իբրև շահերի առևտրական ներկայացուցիչներ: Երկիրն աւերուում էր անդադար պատերազմներից, հանգիստ վայրկեան չունէր ժողովուրդը, նոյն իսկ տիրող օրէնքը պատճառ էր ամենօրեայ կողոպուտների: Հաւատուրացութիւնը միակ ճանապարհն էր խաղաղ և փարթամ ապրուստի, բայց յայտնի է որ այդ միջոցը հայերին երբեք սիրելի չէ եղել և հայ ազգը նահապետակ ազգ է եղել և է իսկ ցայսօր, հայերը կարծես թէ բրիտանութեան համար նահատակուելու են ստեղծուել սկսած Ե. դարուց: Պատմութեան մէջ առանձին յիշատակուած են և համարել կարելի է այն ուրացողները, որոնք թուլացել են իրենց հաւատից: Բայց միայն այս չէր հայերի քաջութիւնը հաւատի մէջ, պարսիկներն աւելի մեծ փորձաքարեր էին ստեղծել նրանց հաւատը փորձելու համար, իւրաքանչիւր հաւատուրաց իմամ Ջաֆարի օրէնքով միակ ժառանգն էր իւր ընտանեաց հարստութեան: Այսպէս, եթէ մի անպիտան ուրանում էր իւր հաւատը, նրա բոլոր

ընտանիքը զրկուում էր օրական պարէնից, որովհետեւ նա էր օրէնքով միակ ժառանգը: Բայց մի երկրում ուր քրիստոնէի դէմ իւրաքանչիւր մահմեականի վկայութիւնն ընդունուում է, կարելի է երեւակայել թէ ի՞նչ մեծ չարիքներ էին գործում այս օրէնքի հիման վրայ, երբ որեւէ աւազակ երկու երեք ընկերներով իրեն ժառանգ էր հրատարակում մի ընտանիքի: Այս օրէնքի խտուութիւնից խուսափելով հայերը ի կենդանութեան իրենց կայքը տալիս էին որ և է մահմեականի ի պահեստ, որպէս զի նա տիրոջ մահուանից յետոյ նրա ժառանգներին յանձնէ, բայց կարելի է երեւակայել, թէ ի՞նչ մեծ վտանգի էր ենթարկուում այսպէս հայոց բարօրութիւնը:

Հայոց ազգի համար մի այլ փորձանք էր դարձել կաթոլիկ բարոզչութիւնը (միսիոնարութիւն): Այս բարոզիչները ոչ մի անհաւատ քրիստոնեայ դարձնելու ղոժ չունենալով՝ խեղճ հայոց ազգիցն է պառակտում և այդ ամեն տեսակ անկերելի միջոցներով: Շարդէնի ասելով կաթոլիկ բարոզիչներից Կարմելեան կրօնաւորներն համարում էին պապի դեսպանները, Օգոստինեանները Փորթուգալիոյ, Կապուցիններն ու Յիսուսեանք Քրանմիայի Պարսիկները յարգանքով էին ընդունում եւրոպական ազգերի ներկայացուցիչներին, յոյս դնելով նրանց օգնութեան վրայ տաճիկների դէմ կռուելու: Այս բարոզիչները ձրի ծառայութիւններ մատուցանելով եւրոպական տէրութիւններին՝ դրա փոխարէն մի վարձ էին պահանջում, այն է միջնորդութիւն պարսից թագաւորի առաջ, որ նրանք հայ կաթոլիկներին պաշտպանութիւն ցոյց տան, իսկ միւս հայերին ստիպեն հնազանդելու պապին, չետաքրքրական է այս բարոզիչներից մէկի, Անկիւրիայ եպիսկոպոսի դիմումն պարսից շահին. «Իբրեւ պապի դեսպան ես պարտական եմ բողոքելու այն ամենայն բանի դէմ, որ Պարսկաստանում կատարւում է ընդդէմ նրա արժանեաց և պատուի. ինքս գիտեմ, որ նորին Մեծութիւնը տեղեակ է, որ պապը Յիսուս Քրիստոսի փոխանորդն է երկրիս վրայ, մինչև անգամ ինքը շահը նրան այդ տիպողոն է տալիս իւր նամակներում, որ ողջում է պապին, և որ բոլոր աշխարհիս թագաւորները նրան հպատակում են և յարգում իբրեւ փոխանորդ Քրիստոսի և չը նայելով բոլոր ազգերի պապին»:

համաձայնութեան, մի բուն հայեր քրիստոնեայ լինելով հանդերձ չեն հնազանդում. նրան, և աւելի ևս իրենց պականութեան մէջ յամառելու համար, պատիւների են արժանացնում իրենցից միայն նրանց, որոնց մասին զիտեն թէ ամենախիստ ընդդիմակացներն են սլաւի, նրանք մինչև անգամ այնտեղն են հասցնում իրենց յանդգնութիւնը, որ որոշ տօն օրեր իրենց եկեղեցւոյ մէջ անէ՞ծք են ուղղում պապի և նրա նախորդների դէմ: Թէպէտ և, ասում է Անկիւրինայ եպիսկոպոս, որ այսպիսի այլանդակութիւններն աւելի արհամարհանաց են արժանի, սակայն գործը հեռուից շատ աւելի մեծ է երևում, քան իսկապէս տեղումն է. պապը, որ իւր հպատակներին խորին յարգանաց մէջ է պահում առ Նորին Մեծութիւնը, կարող է բողոքել, որ Նորին Մեծութիւնը նոյնը չէ անում իւր վերաբերութեամբ և կարող է կարծել, որ ինչ կատարում է իւր անգիտութեամբ, թերևս տեղի է ունենում իւր իսկ հրամանով կամ գոնէ թոյլտուութեամբ: (Relation d'une mission faite par M-gnr l'Archevêque d'Ancyre p. 34—35): Ահա թէ ի՞նչ միջոցով էր կուում կաթողիկոսութիւնը հայ եկեղեցու դէմ, բայց միայն այս չէր, պապի զօրութիւնից շահը կարող էր չակնածել, սակայն շահն ակնածում էր ֆրանսիսից, Աւստրիայից, Փորթուգալիայից, շահը կամենում էր բարեկամ լինել Վենետիկ հասարակագեթութեան և Լեհաստանի հետ և այս բոլոր երկրների դեսպանները կաթողիկ բարոյիչներ էին որոնք լուսաւորչի հօտն իրենց փարախն էին կամենում մտցնել: Քարողիչ դեսպանները լոկ խօսքերով և նամակներով չէին երևում շահի դրանը, նրանք լաւ գիտէին կաշառքի կախարդական զօրութիւնը արեւելքում և ահա նրանց ներկայացրած պարգևները շատ անգամ աւելի աղղու էին լինում, քան թէ՛ բերած նամակները: Պարսկական տիրապետութեան պապութեան տխուր էջերը լի են կաթողիկ բարոյիչների տերահաշակ գործերով, այդ գործերի և իրողութիւնների բացատրութիւնները եթէ ցարդ անյայտ էին, այժմ բարոյիչների յիշատակարանների հրատարակութիւններով պարզուած են և դժուար է ասելը, թէ խեղճ հայ եկեղեցուն պարսկական բռնութիւնն ու անհաւատութիւնն է աւելի մնասել, թէ հռովմի արքանեակների չարութիւնը: Իրենք

այդ բարոյիչները վկայում են, որ հայերը սիրով էին ընդունում նրանց իբրև եղբայրներ ի Բրիտանիա, պատասպարում, կերակրում էին նրանց, եկեղեցեաց մէջ թղլ էին տալիս բարոյելու, յարգում էին նրանց գիտութիւնը, իւրեանց որդւոց նրանց էին տալիս դաստիարակելու, իսկ այդ գառնազգեստ գայլերը մի նպատակի էին ծառայում, նրանք հաւատ էին գնում նոյն իսկ դրամով:

Այս բոլոր հնարների առաջ անդօր էին հայերը, մանաւանդ անդօր էր հայ անշքացած եկեղեցին, բայց այսուամենայնիւ այնքան մեծ էր հայ եկեղեցու ներքին ոյժն, որ այդ բարոյիչներին հետևողների թիւը չէր աւելանում և կաթողիկոսութիւն մի ժամանակ տարածուած տեղերում ևս այժմ հետք չը կայ: Այս ամենը բարոյիչ հայերը վերագրում են սատանային... Տուրնըֆորն իւր ուղեգրութեան մէջ այս անշարժութիւնը վերագրում է հայերի յամառութեան, նրանց յաջողութիւնը պարսիկ իշխանների առաջ բացատրում է մեծաքանակ կաշառներով և մատնութեամբ: Արդարև հայերը մեծամեծ տուգանքներ էին տալիս իրենց դատը պաշտպանելու համար, երբեմն ևս հասկացնում էին պարսիկներին, որ այդ բարոյիչները մէկ մէկ լրտեսներ են, որոնց պահում էին եւրոպական իշխանները Պարսկաստանում: Խաղաղութեամբ տպրելու ամենայն միջոց ձեռնարկում էին հայերը, մինչև իսկ կաթողիկոսները պապերին էին դիմում և խնդրում հանգիստ թողնել իրենց հօտը, որ վաղուց ի վեր ուղղափառ քրիստոնեայ էր, իզո՛ւր, պապը աւելի էր բազմացնում այդ խռովարարների խումբը:

Քարոզչութեան կենդրոններն էին. Շամախին, որ այն ժամանակ առաջին վաճառաշահ կենդրոնն էր ամբողջ Կովկասի, Նախիջևանն, ուր բազմաթիւ էին և բարեկեցիկ հայերը, Երևանն, որ մերձաւոր էր հայ եկեղեցու սրտին, ս. Էջմիածնին: Շնորհիւ Քրանսիայի թագաւորների պաշտպանութեան Յիսուսեան հայրերն իրաւունք էին ստացել Երևանում բարոյչութեան կենդրոն հաստատելու: Ինչպէս ամենուրեք, այնպէս էլ այստեղ կաթողիկ գինուորութեան այս մատեան դունդը, յիսուսեանները, հարուածն ուղղել էին սրտին, նրանք կաթողիկոսի միջոցով ազգն էին կամենում հպատակեցնել պապին: Նահապետ կաթողիկոսը զի-

ջեւ էր նրանց թախանձանքներին, իրաւունք էր տուել հայ եկեղեցիներում բարոզելու և առ հասարակ բարեկամաբար էր վերաբերւում նրանց, այս բարեկամութեան պատճառաւ իսկ վայր գլորեցին նրան հայերը հայրապետական գահից, մինչ յիսուսեանները շահից յաջողեցան նահապետին կրկին կաթողիկոսացնելու հրամանագիր առնել: Յիսուսեանները գրաւել էին աշխատում հայերին և երկրաւոր բարիքներ խոստանալով, նրանք շարունակ պնդում էին, որ եթէ հա. յերն հպատակին պապին, սա կը միջնորդէ եւրոպական թագաւորների առաջ, որ նրանք պաշտպանեն հայերին:

Ջարմանալի է կաթողիկ բարոզչութեան դարաւոր աշխատութեան հետքի կորուստն, այսօր ոչ Շամախում, ոչ Երևանում և ոչ նախիջևանում մի հատիկ կաթողիկ անգամ չը կայ:

Այս անյաջողութիւնը և կատարեալ անպտուղ գործունէութիւնը յայտնի է և իրենց իսկ կաթողիկներին: Շարդէնն ասում է. «բարոզիչները քիչ շատ յաջողութիւն ունին արեւելեան քրիստոնէից մէջ բացի հայերից»։ Գարցիա ֆիգլիբրօան ասում է. «յիսուսեանք չեն յաջողում հայերին դարձնելու... նրանք խիստ պինդ են իրենց հաւատին եւ դատում են այդ մասին առողջամտութեամբ»։ Թեպէս և գրութեանս սահմանը չափից աւելի է ընդարձակւում, բայց չեմ կարող այստեղ յառաջ չը բերել Շարդենի խօսքերը հայոց հաւատի դիմացկունութեան մասին:

«Մի զարմանալի բան է, կամ եթէ կողզէք, նոյն իսկ հրաշք է, որ չը նայելով թէ հայերը աասնմէկ դարու չափ գտնւում են մահմետական լծի տակ, որ նրանք աղքատ են և ազէտ պնթան, ինչքան կարելի է երեւակայել թէ կրկինն մի պոպիսի ստրկութեան հասած մարդիկ. բայց այսուամենայնիւ նրանց հաւատը անդրդուելի է: Նրանք պահպանում են իրանց հաւատը առանց փոխել կամենալու, հաւաստապէս դիմանալով իրենց գերիշխան մահմետական բռնութեան և հռովմէական բարոզչութեան, որ երկու դարուց աւելի աշխատում է իւր բարոզիչ քահանաների և վարդապետների միջոցով, նրանց իւր հետ միաբանելու: Անասելի են այն բոլոր ճարտարութիւնն և ծախքերը, որ հռովմի պալատն այս մասին գործ է դրել երկու դարուց ի վեր, բայց զո՞ւր,

որովհետեւ որանցից Եւրոպայում կաթոլիկ դարձածներից որն էլ դառնում է հայրենիք, հասած օրուանից աւելի ևս հայ է բան թէ երբեք, և սկսում է նորից նշովել Լեոն պապին, իբրև պատճառ արեւել և արևմտեան եկեղեցիների բաժանման, և բոլոր նրա յաջորդներին, և առում է հռովմեական եկեղեցու բոլոր այն վարդապետութիւնները, որ հակառակ են իր եկեղեցու վարդապետութեանց... 1):

Ինչքան էլ դիմացկուն լինէին հայերը այսու ամենայնիւ այդքան բազմադիմի հալածանքներին դիմանալու ղոժ չունէին, ուստի բնական է, որ ելք վնտուէին այս վիճակից: Ճշմարիտ է յարգոյ հեղինակի այն կարծիքը, թէ եւրոպական տէրութիւններին դիմելու միտքը հայերին տուել են կաթոլիկ բարոզիչները, մասնաւորապէս յիսուսեանք: Աւելի հեռուն քննելով կարող ենք ենթադրել, որ Էջմիածնի ժողովը 1678 թ. նրանց գործն էր ուղղակի, բայց այս մասին չկան աղբիւրներ:

Ե.

Հայոց պարսիկների լծից ազատութեան խնդիրը, որ ծագեց Թէ. դարու վերջին և վերջացաւ մեր դարու սկզբում, սերտ կապուած է մի պատմական անձի հետ, որի անունն անգամ մենք չենք գտնում: Չամչեանի եռահատոր պատմութեան մէջ: Այդ անձն ԻՍԻԱԵԼ ՕՐԻՆ էր: Մինչև այժմ Օրիի մասին միայն առասպելներ և զրպարտութիւններ էին յայտնի 2), մեծարգոյ պ. Եղեանին ենք պարտական մենք այս եռանդուն հայրենասիրի և անցեալ դարու ամենանշանաւոր հայ գործչի իսկական պատմութիւնն և նրա պատուի վերականգնումը: Հրաքարակուած վաւերացութեւրիս մեծագոյն մասը Օրիի ձեռքով են գրուած կամ նրանից են ներշնչուած, այդ թղթերի մէջ մենք գտնում ենք այն ժամանակի Հայաստանի, Պարսկաստանի և նոյն իսկ եւրոպական պետութեանց պատմութիւնը: Տասն և ութերորդ

1) Chardin T. II. p. 184—5:

2) Տես ներածութիւն էր. LXXXIII և Krusinski. The History of the late Revolution of Persia. I. London MSCCXL.

դարը լի էր պատմական բախտախնդիրներով, սակայն Օրին չափ բարձր է այդ բախտախնդիրներից և թէպէտ նրա ձեռնարկութիւնը նման է իւր ժամանակակից այլ բախտախնդիրների ձեռնարկութիւններին, բայց Օրին զանազանուժ է դրանցից այնու, որ զործով է իբրեւ հայ ազգի հաւատարմութար, Իրաւ է, Օրիի ձեռնարկութիւնն աւարտուժ է իբրեւ մի բախտախնդրութիւն, բայց նրա սկսած գործը գլուխ է հանուժ նոյն միջոցներով ևնոյն ճանապարհներով, որ Օրին ծրագրել էր մի դար առաջ Սահայն առաջ չ'անցնենք և համառօտելով այստեղ Օրիի պատմութիւնը, միջոց տանք ընթերցողին անձամբ դատելու այդ արտաքոյ կարգի անձի մասին:

Օրին ինքը քանիցս առիթ է ունեցել իւր մասին գրելու, մեր վաւերաթղթերի մէջ մանրամասն և երբեմն հատուկագոր տեղեկութիւններ կան նրա կեանքի մասին, այնպէս որ այժմ դիւրին է վերականգնել նրա կենսագրութեան գլխաւոր կէտերը: Վաւերաթղթերից Օրինն են վերաբերուժ № 5, 11, 14, 44, 120, 180, 188 և այլն, առանձնապէս № 44 և 120:

ԺԷ. դարում նշանաւոր էր Պաօշեանց իշխանական ցեղը Խաչէնում, որոնց ներկայացուցիչն էր 1678 թ. ժողովում Իսրայէլ իշխանը, որին երկոտասանից ժողովն ընտրեց պատգամաւոր Յակովբ Դ. կաթողիկոսի հետ միասին Եւրոպա գնալու: Իսրայէլն այնքան յայտնի անձն էր, որ չէր կարող հեռանալ առանց կասկածի տեղիք տալու պարսիկներին և առանց իւր տան դժբախտութեան պատճառ լինելու, սւստի ինքը հրաժարուեց պատգամաւորութիւնից և իւր փոխանակ կաթողիկոսին ընկերացուեց իւր երիտասարդ որդուն: Սա ևս իւր հօր անուն էր կրում, սա ևս կոչւում էր Իսրայէլ կամ աւելի ճիշդ Իսրայէլօրի, Իսրայէլօրին (Իսրայէլօրի՝ Israhelorin, Israhel Ory): Հայերէն վաւերաթղթերի մէջ այս անձը կոչւում է Իսրայէլ, պարոն Իսրայէլ կամ պարոն Իսրայէլ Օռի, օտար լեզուով թղթերի մէջ ինքն ստորագրում է Israhel Ory, Израиль Ори կամ Орей, Ա. նուաճն այս ձևերը ծագում են Իսրայէլի Եւրոպայից դառնալուց յետոյ, թէ առաջին նուագ Հայաստանից դուրս գալուս ի՞նչպէս էր կոչւում նա, մեղ յայտնի չէ, միայն թէ

№ 2. վաւերաթղթի մէջ քանիցս այդ անունները կից են գրուած (Israëlorin), իսկ միւս բոլոր թղթերում առանձինն (Israël Ory). Դեռ փորձ չէ եղած բացատրելու անուանս այս ձևը, այդ փորձը չէ արել և վաւերականներին հրատարակիչը Հարկաւ բոլորովին այլ նպատակ ունէր անուանս ապագայ բացատրութիւնը, որ տուին կաթոլիկ բարոզիչներն Իսրայէլի անուան, երբ նա իբրեւ դեսպան քանի մի տէրութիւնների մասւ Պարսկաստան և փոխանակ գործիք լինելու միսիոնարների, եղաւ նրանց համար ոսոխ: Սրանք պարսից թագաւորին երկիւղ տուին ասելով՝ որ այդ անձի անուան տառերը կազմում են հետևեալ նախադասութիւնը «il sera roi» (I, s, r, a, e, l, o, r, i) ընա թագաւոր պիտի լինի: Ինձ թւում է որ համար 2. վաւերաթղթի գրութիւնը (Israelorin) կարող էր ծագել Իսրայէլ ՈՐԻԿ փառաբանական ձևից կամ Իսրայէլորդի հայրանունից, սակայն № 1-ի վաւերաթղթի այն հասուածը, ուր Օրին նկարագրում է իւր խօսակցութիւնը իրեն չճանաչող քրոջ հետ, ցոյց է տալիս, որ Օրի կոչումն Իսրայէլի մականունն էր (տ. եր. 51.) բայց թերևս սղգանունը: Ինքն Իսրայէլ գործ է դնում այս մասնիկն իբրեւ արգանուն, որից կարող ենք գուշակել, որ նրանց ընտանիքն յայտնի էր այդ անուամբ, այս առաւել ևս հաւանականութիւն ունի, Պարսկաստան դեսպանութեամբ գնալու համար նա խնդրում է իրեն ուրիշ անուն տալ:

Իսրայէլ Օրին ծնունել էր հաւանօրէն 1659 կամ 1660 թուականներին, որովհետև 1699 թ. նա իւր քրոջ հետ խօսելուս իրեն նկարագրում է «un homme de quarante ans ou environ» (մի քառասուն կամ մօտ քառասուն տարեկան մարդ): Սրա պատմութիւնը յայտնի է մեզ սկսած իւր քսանամեայ հասակից, երբ Յակոբ Դ. կաթողիկոսի հետ գնում է Կ Պոլիս: Անհաւանական չէ ենթադրել, որ Իսրայէլը կրթուած էր Երևանի յիսուսեանների մօտ և թերևս գիտէր լատիներէն ու եւրոպական լեզուներից ֆրանսերէն, որով նա սիրում է յաճախ գրել իւր թղթերն, մանաւանդ մտերմականներն և որով միայն ամենից կանոնաւոր է գրում: Այս ենթադրութիւնը մեզ հաւանական է թւում և այն պատճառով, որ նա Յակոբ կաթողիկոսի մօ-

հաւանից յետոյ Եւրոպա անցնելով դիմում է Ֆրանսիա և պնտեղ զինուորական ծառայութեան է մտնում, որի համար հարկաւ պէտք է երկրի լեզուն իմանար, Վենետիկում 4 ամիս անալով նա ոչ մի նոր լեզու սովորել չէր կարող։ Բացի այս հանգամանքից մեզ հաւանական է թուում նրա յիսուսեանների աշակերտ լինելն և այնու, որ ուղղակի Ֆրանսիա դիմեց, որի պաշտպանութեան տակ էին յիսուսեանք Պարսկաստանում։ Ցասն և երկու տարի Ֆրանսիայում անց Օրին, վեց տարի Ճանապարհորդելով ամբողջ երկրում, 6 տարի էլ ծառայելով բանակում, 3 տարի իւրեւ սպայ հեւեակազորի 3 տարի իւրեւ գնդապետ հեծելազորի։ Ֆրանսիայի նամուր բաղարում գերի ընկնելով (1892 թ.) անգլիացոց ձեռքն, արձակուեցաւ ազատ իւրեւ օտարերկրացի և գնաց ծառայելու Բաւարիոյ կայսրընտրին։ Յիշատակում է որ Իսթալէլը Ճանապարհորդում էր մի հայ եպիսկոպոսի անցաթղթով, արդեօք այդ անցաթուղթը Երևանի եզուկաններից չէ՞ր, որ նրան ազատ անցք էր տալիս ամբողջ Ֆրանսիայում և ապա պաշտպանութիւն ընձեռեց Բաւարիոյ իշխանի մօտ, դարձեալ երևի շնորհիւ յիսուսեան հայերի, որոնցից մին այդ իշխանի խոստովանահայրն էր, միւսը Լեոպոլդ կայսեր։

Օրին ծառայում է Բաւարիոյ իշխանին 4 տարի իւրեւ կոմիսար Հայդելբերգ, Մանհայմ, Ֆրանկէնթալ և Մէնե (?) բաղարներում։ Մերձենալով իշխանին Օրին նկարագրում է իւր հայրենակիցների թշուառութիւնն և գրաւում է նրան հայոց խնդրի համար։ Թէ ի՞նչը դրդեց Պալատինեան իշխանին հայոց դատն ըստանձնել, խնդիր է, գերմանացի գիտնական Հայգէլը, որ 1894 թ. առաջին անգամ ի լոյս ընծայեց այն խնդրին վերաբերեալ վաւերաթղթերը, կարծում է՝ թէ Յովհաննէս Վիլհելմ իշխանին դրդողն էր հայոց թագաւորական գահը, պ. Եզեանը տրամադիր է այս միջնորդութիւնը վերագրելու նրա քրիստոնէական եռանդին, հաւանական է սակայն, որ գերմանացի իշխանին համոզող յիսուսեանները չէին մոռացել և նրա փառասիրութիւնը գրգռելու, ուստի և երկու պատճառներն ևս ազդող էին ձեռնարկութեանս մէջ։ Պալատինեան իշխանի թղթերով առ հայ իշխանները և առ վրաց խանը Օրին դիմում է Վեննայ

աւստրիական կայսեր, այնտեղից մեծամեծ նեղութիւններով հասնում է Յաճկաստանի վրայով իւր հայրենիք, ուր ընդամենը 15 օր միայն մնալով հայ իշխաններէ թղթերով դառնում է իւր նոր ընկեր Մինաս վարդապետի հետ Բաւարիոյ իշխանի մօտ։ Օրին ինքը գրել է այս ուղևորութեան նկարագիրն իւր հովանաւորող գերման իշխանին, 1894 թ. հոկտեմբերի 1-ին (№ 11)։ Այս թուղթը մի գլուխ գործոց է այն ժամանակուան քաղաքագիտութեան, ափսոս որ չեմ կարող այստեղ առաջ բերել երկարութեան պատճառով։ Ուշադրութեան արժանի է թղթիս մէջ այն քաղաքական ընթացքը, որ Օրին բռնել է Յաճկաստանում իրել Ֆրանսիոյ Թագաւորի հպատակ, նոյնպէս և այն քաղաքական խօսակցութիւնը, որ նա ունեցել է մեծ վեգիւրի հետ։ Սրտառուչ է Օրինի հանդիպումն իւր քրոջ հետ, ապա իւր եղբայր Վարդանի հետ, որոնց նա չէ յայտնում իւր ով լինելը։ Միակ անձըութիւնը նկատում ենք ամսաթուերի մէջ. 1899 թ. ապրիլի 4-ին հասնում է Օրին Էջմիածին և տեսնելով որ ժամանակի կաթուղիկոսը (Նահապետի գահավիթութիւնից յետոյ նստող Ստեփաննոսը) չէ կարող համակրել իւր գործին, դնում է իրենց տուն նոյն օրն, որից ենթադրում ենք, որ նրանց տունը կամ նոյն իսկ Էջմիածնումն էր կամ նորան շատ մօտիկ, այդտեղ մնալով մինչև ապրիլի 6, նա գրում թէ 7-ին աղդէն Անգեղակոթ է գնացել, իսկ 8-ին ապրիլի Գանձասար, կարծում ենք որ այս տարածութիւնն Էջմիածնից մինչև Գանձասար, այն ժամանակ ինչպէս և այսօր անհնարին է 2 օրուան մէջ անցնել։ Առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Օրին Գանձասարու կաթողիկոսին համոզել է ճշգնում հպատակելու պապին և կաթողիկոսութիւն ընդունել, իսկ նա չէ համոզուում, բայց հայ իշխանները վճռում են առանց հոգեւորականների գործ տեսնել և առանձին ժողով են գումարում, ուր Օրին յանձնարարական թղթեր են տալիս և հաւատարմութուղթ։ Օրին պահանջում է մի եկեղեցական կամ մի աշխարհական իշխան ընկեր, որ և տալիս են նրան յանձին Մինաս վարդապետ Տիգրանեանի։ Մինակ այս նամակի մէջ ակնարկութիւն կսյ, որ հայք մի գերիշխան Թագաւոր են կամենում ունենալ և այդ ցանկացած Թագա

ւորն ինքը Պալատինեան իշխանն էր Հաւանօրէն այստեղից է եզրակացրել Հայգելը որ Բաւարիոյ կայսրընտիրը ձգտում էր հայկական թագին:

Այս ուղեւորութիւնն յաջող աւարտելով Օրին Կ. Պօլսի և Վէննայի վրայով դառնում է կայսրընտրի մօտ և 6 ամիս սպասում է այնտեղ մինչև իշխանի առողջանալը, որովհետև այդ ժամանակի ընթացքում նա հիւանդ է լինում:

Պալատինեան իշխանի հետ վերջնականապէս պայման գնելով Օրին գնում է Վէննայ կայսեր հաւանութիւնն առնելու, խորհուրդն աւելի ևս հասունանալով՝ Օրինն առաջարկում են Մոսկուա գնալ և Պետրոս Մեծի հաւանութիւնն ստանալ զօրքերը Ռուսիայով անցկացնելու համար: Այս բանադնացութեանց մէջ Օրինն ձեռնադրւում են երկու յիսուսեան պատէր Վոլֆ կայսեր մօտ և պատէր Պոտտիէ Բաւարիոյ իշխանի խոստովանահայրը: Օրին հասնելով Մոսկուա փոփոխում է իւր յանձնարարութեան նպատակը, նա յայտնում է, որ ինքն ուղարկուած է հայ իշխաններից Ռուսիոյ ինքնակալի մօտ (տես № 44), Թէպէտ և հետաքրքրական է, բայց շատ երկար, բոլոր այն կերպարանափոխութեան պատմութիւնը, որ կրեց Օրին դեսպանութիւնը Մոսկուայում, բաւականանալը յիշատակելով որ Օրին կարևոր դատեց հայոց ազատութեան գործը միմիայն ռուսաց կայսեր յանձնելու և եւրոպական իշխանների մասնակցութեանը միմիայն բարոյական ձև տուաւ: Այս փոփոխութեան պատճառներն երկու էին, մէկը գերմանացոց պատերազմը Ֆրանսիայի հետ և միւսն եկեղեցական միութեան պահանջը, որից յետ չէին կենում կաթոլիկները և որից խորշում էին հայերը: Այս կերպարանափոխութիւնից յետոյ հազիւ 1707 թուին (1700—1707) յաջողում է Օրին իւր ձեռնարկութեան սկզբնաւորութիւնը, Պարսկաստան դեսպան գնալը: Օրին Բաւարիոյ դքսի դրանը և Լէօպոլդ կայսեր մօտ արդէն իսկ իւր պայմանը վերջացրել էր, սրանք համաձայն էին և պէտք է զօրք անցկացնելու թոյլտուութիւն խնդրէին ռուսաց տէրութիւնից, բայց Օրին Մոսկուայում ստիպուած եղաւ փոխելու իւր ծրագիրը, տեսնելով՝ որ Պետրոս կայսրը ինքը միայնակ է կամենում գործին ձեռնարկել և եւրոպական իշխանների ձեռնաւորութիւնը միմիայն իւր նպատակների

Համար է գործ դնել կամենում: Մինչդեռ Օրին ամենայն պայման վերջացրել էր Բաւարիոյ իշխանի հետ (տես № 9 և 10) այժմ նորեկ պէտք է պէտք պայմանները փոփոխել: Համար 6 վաւերաթուղթը մեզ կապածելի է թուում ¹⁾, հաւանական ենք համարում, որ այդ թուղթը Մոսկուայում գրուած լինի Օրիի ընկեր Մինաս վարդապետի ձեռքով այն հաւատարմական թղթի հիման վրայ, որ տուել էին իշխանները Օրիին: Յայտնի է որ Օրին ոչ մի խօսք չէր ասել Անգղիոյ ժողովում Պետար Ալէք. Թագաւորի մասին, որին ինքն և հաղիւ էր ձանաչում, ուրեմն ինչպէս կը գրէին հայ իշխանները նրան: Օրին ստիպուած էր հարցաքննուելու իսկ փոփոխել իւր գալստեան նպատակը, այդ պարզ երևում է № 4 է վաւերաթղթից, ուր ասուած է, թէ նա ուղղակի ուսաց կայսեր մօտ է ուղարկուած, բայց ձանապարհը փոխել է պարսից երկիւղից (7):

Վերին աստիճանի հետարբերական են Օրիի բանագնացութիւնները Մոսկուայում. ուր յաջողում է նրան գրաւել Գոլովին նախարարապետին ապա կատարել ամենայն ինչ ըստ իւր ցանկութեան: Գոլովինի ձեռնառութիւնը գրաւում է Օրին մեծ գումար խոստանալով նրան, այդ գումարը պիտի բերէր հայ իշխանների մօտ ուղարկուած Վասիլիայ Միրոնով կոչուող հայ դեսպանը, սակայն հայ մելիքները փոխանակ դրամի մուրհակ էին ուղարկել 20 հազար ոսկու, ահա այդ մուրհակը:

№ 102. «Մեր մեծ Հայաստանայ մելիքս խոստացինք « որ տանք Ֆէդր Ալէքսէուիճ Կլովին որ ես Աջորդ Մեծին « Մոսկովի Թագաւորին, ԻՌ. ոսկի որ կանէ ԲՈՒՒՃ (2400) « թուաման ինչ ժամանակ որ այս խորհուրդն կատարի ավ. « անպատճառ տամք և այլ աւելի շնորհակալութեամբ չը. « նորհեմք քո մեծ բարութեանդ փոխարէն որ կառնես այն « նեղ ժամանակին վասն մեր. (կնիքներ)

Թովին ՌՃԾԲ մայիս ԻԷ, ի գաւառն Աղվէ՛:

Ստորագրութիւններ: —

¹⁾ Ստեփաննոս Ռաշքայի վկայութիւնը հաստատում է այդ թղթի մելիքներից գրուած լինելը, հիմա եր. LXXXVI ծանօթ. 2, թէպէտ և նրա անդեկութիւնների աղբիւրը Օրին լինելով աւանդին նշանակութիւն չունի:

Շուկեզական պատերազմը խանգարում էր Պետրոս կայսեր այս գործն սկսելու, բայց նա ամենայն եռանդով հետևում էր այս խնդրին և նախապատրաստութիւններ էր տեսնում, Օրիի առած անդեկութիւնները ստուգում էր վաճառականների և իւր ներկայացուցիչների ձեռքով: Օրին տեսնելով գործի երկարելը, չէր յուսահատւում, մինչև գործին ձեռնարկելը նա մտածեց կրկին Պարսկաստան գնալ և նախապատրաստել հայոց ապստամբութիւնը: Զարմանալի ճարպիկութեամբ և նրբամտութեամբ կարողացաւ նա գլուխ բերել, որ ինքը իբրու պապի, գերմանական կայսեր, Պալատինեան կայսերընտրի և ոռոսաց կայսեր գեսպան և ոռոսական բանակի գնդապետ ուղևորուեց մեծ շքամբով Պարսկաստան և չը նայելով մեծամեծ արգելքների, շահ Հիւսէյինից ընդունուեց իբրև գեսպան, երկու տարու չափ փաց Պարսկաստանում և ամենայն անդեկութիւններ ժողովելով, ամենայն ինչ նախապատրաստելով վերադարձաւ: Այս անգամ բախաւ մտանեց Օրիին, ճարպիկ ձեռքով լարուած մի նենգ դաւադրութիւն թող չը տուաւ նորան Աստրախանից դուրս գալու և ներկայանալու մեծ կայսեր: Ղազանի վոյէվոդ Ապրակսինը մեծ դեր խաղաց Օրիի կողոպտման և սպանման մէջ, որ պարզ երևում է վաւերացութեան, 1711 թ. 7-ին նոյեմբերի ստացուեց Ապրակսինի ղեկուցումն, որ Օրին մեռել է Աստրախանում և թաղուել, այլ աղբիւրների հաղորդելով Օրիին թունաւորել էին:

Օրիի այս եղերական վախճանը վերագրել կարելի է մէկ յիսուսեանների խարդաւանանքներին, մէկ էլ նրա բերած հարստութեան հռչակին...

Օրիի մարդիկը ցրուեցան, նրա բերած մեծաքանակ հարստութիւնը աւարի մասնուեցաւ, հազիւ մի բանի փացորթը հասան Մինաս վարդապետի ձեռքը, որ երաշխաւոր էր Օրիի մեծաքանակ պարաբերին: Երևում է որ Օրիի ընտանիքին ևս ոչինչ չը հասաւ, որ այդ միջոցին Դիւսէլֆորֆից փոխադրուել էր Մոսկուա: Յիշենք այս առթիւ, որ Օրին Դիւսէլֆորֆում ամուսնացած էր, երևի օտարուհու հետ և ունէր երկու որդի:

Այսպիսի ողորմելի վախճան ունեցաւ երեսուն տարի իւր հայրենիքի համար աքնոյ Խորայէլ Օրին, բայց նրա ըս-

կըսած գործը շարունակուեցաւ և ուստաց կառավարութիւնը կարողացաւ ժամանակին տիրել Կապից ծովի ափերին, որով խանգարեց Յաճկաստանի տիրապետութեան:

Այս է Օրիի համառօտ կենսագրութիւնը համաձայն հրատարակուած վաւերացումներէ: Երկու դար է սակայն, որ այս անձի վրայ ծանրանում էր յիսուսեանների զրպարտութիւնը. Օրիի ժամանակ պարսից թագաւորի դրանը ներկայ էր յիսուսեան կրօնաւոր Կրուսինսկին, որ իբրեւ Ֆրանսիայի ներկայացուցիչ և իբրեւ միսիոնար հաշտ աչքով չէր կարող տեսնել Օրիի յաջողութիւնն, ուստի և իւր գրած պատմական երկի մէջ Օրիին ներկայացրել է իբրեւ մի բախտաւընդիր: Սրան են հետեւել յաջորդ ժամանակներում Օրիի մասին գրողներից շատերը, նոյն իսկ Հայդելը: Հակառակորդների այս անհիմն զրպարտութիւնները գեղեցիկ կերպիւ հերքել է պ. Եղեանը իւր ներածութեան XI գլխում (եր. LXXXIII), ուր նկարագրուած է և Օրիի քնաւորութիւնը:

2.

Օրիի անմիջական գործակիցն էր Մինաս վարդապետ Տիգրանեանցը, որ ծննդեամբ Քարբերդեցի էր և Ղարաբաղում վանահայր սուրբ Յակոբի վանքի: Սրան ընկերացրին Օրիին 1699 թ. Անգեղակոթում ժողովուած իշխանները, որովհետև Օրին պահանջում էր մի եկեղեցական կամ մի աշխարհական ընկեր: Ղարաբաղի հոգևորականները վեճին աստիճանի ագէտ էին, նրանք թէպէտ և գիտէին զէնք բանեցնել և թշնամեաց դէմ բաջուութեամբ կռուել, բայց հաւատոյ եօթն խորհուրդներն անգամ չէին կարողանում թուել (№ 11): Մինաս վարդապետն երևի գիտակցանի հռչակ ունէր նրանց մէջ, թէպէտ և նրա գրած թղթերը ցոյց են տալիս այդ անձի տգիտութիւնն և պարզամտութիւնը:

Սկզբի ժամանակներում Մինաս վարդապետը ամենայն խնդիրներում համաձայն չէր Օրիի հետ, բայց վերջն ընկաւ կատարելապէս այդ հանձարեղ մարդու ազդեցութեան տակ. թերևս հաւանական լինի կարծելը, որ Օրին եկեղեցական միութեան խնդրին սկզբում նշանակութիւն չը տալով պատրաստ էր ամենայն զիջումն անելու, մինչև իսկ կարելի է

կարծեւ, որ սուտ չէ Նրուսինսկու կարծիքը, որ նա կաթոլիկ էր, այսինքն՝ կաթոլիկ էր ձեւանում ըստ տեղւոյն: Այս հանգամանքն ամենեւին զարմանալի չէ, եթէ աչքի առաջ ունենանք ժամանակի քաղաքականութիւնը, երբ կաթոլիկ Ֆրանսիայի խիստ կաթոլիկ թագաւորները բարեկամութեան դաշն ունէին սուլթանի հետ և ամենայն օգնութիւն հասցնում էին թուրքերին ընդդէմ գերմանական կայսրների: Արդ՝ Օրին համոզուելով, որ անհնարին պիտի լինի հայերին ազատել գերմանական ուժով, յարեց ռուսաց կայսրին, մանաւանդ որ սա հաւատոյ մասին պայման չէր դնում, այլ ընդհակառակն աղատութիւն էր խոստումում հաւատոյ (№ 54): Մինաս վարդապետը, որ սկզբում կարող էր գայթակղուել Օրին անխորութիւնից, ինքն ևս իւր կեանքի վերջը նոյն պիտի մէկը դարձաւ, առաջարկելով ռուսաց կառավարութեան, որ ընդունուի ի շարս օրթոդոքս եպիսկոպոսաց, երեւի մահը պատճառ եղաւ նրա այս ցանկութեան անկատար մնալուն:

Մինաս վարդապետն ամենամեծ գործունէութիւն ցոյց տուաւ Օրին մահուանից յետոյ, երբ ամենայն ջանք թափեց ազատելու Օրին ստացուածքի մնացորդը անխիղճ յափշտակութիւն և մասամբ վճարելու պարտքերը, որոնց ինքն էլ երաշխաւոր էր: Օրին քաղաքական ժառանգութեանը չկարողացաւ նա տիրանալ, զուր տքնեց իրաւունք ստանալու Օրին բերած պատասխանները պապին և կայսրին հասցնելու համար Եւրոպա գնալու: Նա չը ստացաւ այդ թոյլաւութիւնը, երեւի նրա համար, որ ռուսաց կառավարութիւնը վրձնեց պարսկական խնդիրն իւր ձեռին՝ առնել ու թոյլ չը տալ, որ եւրոպացիք խառնուին այդ գործին:

Ընդհակառակն այժմ Մինաս վարդապետն ուղարկուեցաւ (1716 թ.) հայրենիք ապստամբութեան գործը պատրաստելու, նա կարողացաւ վառ պահել հայ մեղիքների յղար ռուսաց կայսր օգնութեան վրայ, թանգագին տեղեկութիւններ մատակարարեց ռուսաց՝ երկրի վիճակի վրայ, ի փոխարէն՝ այս ծառայութեան նա հոգեւոր գլուխ ճանաչուեց ռուսաստանի հայերին, որ ստորագրեց Գանձասարի կաթողիկոսութեան:

Ինչպէս երևում է № 213 վաւերագրից, նա մաս-

նակցեց ռուսաց արշաւանքին դէպի Պարսկաստան: Պետրոս Մեծի մահուանից յետոյ նրա վրայ ուշք դարձնող չեղաւ, իւր հօտի, Աստրախանի թեմի հայերի համակրութեան ևս չարժանացաւ նա և իւր կեանքի վերջին աղքատութեան և անարգանաց հասաւ, որից դուրս գալու համար ցանկութիւն յայտնեց օրթոդոքս դառնալու, բայց մինչև այդ ցանկութեան կատարումը մեռաւ:

Օրիի միւս գործակիցներից յայտնի են Նազար Արեւովիչ և Վասիլի Միրինով կամ Մուստաֆին հայերը, սրանցից առաջինը Պարսկաստանցի էր և Օրիի հետ միասին էր եկել Մոսկուա, ապա քանիցս ուղարկուել իբրև բանքեր եւրոպա և Լեհաստան, սա 1706 թ. անցաթուղթ ստանալով գնացել էր հայրենիքի տեսութիւն իւր ընտանեաց (տես № 137 և 138), իսկ երկրորդը, Մուստաֆինը Մոսկուա յուսմէ էր ապրում իբրև պաշտօնաթող սպայ ռուսաց բա, նակի: Սա ուղարկուեցաւ Ղարաբաղի մելիքների մօտ և նըրանցից նոր թղթեր բերաւ:

Հետաքրքրական է Օրիի հետևորդների ցուցակը № 151 և 152, ուր նկարագրուած է այդ տարօրինակ և միջազգային շբախումբը, որի մէջ ամեն ազգ իւր ներկայացուցիչն ունէր: Սրանց թիւը 80-ի հաւաւ այր և կին, տէր ու ծառայ: Առաջին քարտուղարն էր Օրիի Peter simonnaire, երկրորդը՝ Awet di Murat, հայ ազգաւ, բացի սրանցից Օրին առաջին անգամ Ռուսաստան էր բերել և իւր հայ խոհարար Մարաինին և վարսաւիրա Աւետ Սարգսի որդուն: Ինքնակամ ընկերակցում էին նրան բժիշկ Աբրահամ Հաուման և աստուածաբան Յովակիմ Շրէօդէրը, որ յետոյ յայտնի եղաւ իւր՝ հայոց լեզուի գանձարան կոչուած բերականութեամբ:

Այս խառնիճաղանձի մէջ կային ֆրանսիացիք, Զուիցերացիք, Հոլլանդացիք, Գերմանացիք, Ռուսներ, Յոյներ և Հայեր և ամենի մէջ միայն Զաքարիա Վիսստոկը անհաւատարիմ գտնուեցաւ իւր տիրոջն և Աստրախանում միանալով Օրիի թշնամիներին, մեծ փեսա հասցրեց նրան (տես № 171):

Հայ գործիչներեց Օրիի հետ միաբան էին 10 մելիք և Գանձասարու կաթուղիկոսները, այդ մելիքներն էին Հակիմի որդի Փիլիպոս, Ասատուրի որդի Սարուխան, Մելքոնի որդի Սաֆ-

րազ, Նարինբեգի որդի Շահնազար, Պահլավի որդի Մելքոն, Պաղտասարի որդի Թադէոս, Եսփարի որդի Աղաճան, Նաւի որդի Եովհաննէս, Պաղտասարի որդի Մելքոն, Շահինի որդի Սուբիաս: Ափսո՛ս որ այս անձանց անուաներից զատ ոչինչ չը գիտենք նրանց մասին:

Է.

Օրիի մահուանից (1711 թ.) յետոյ Մինաս վարդապետն ամենայն կերպիւ աշխատում է շարունակել իւր ընկերոջ սկսած գործը, սակայն չունենալով ոչ նրա խելքը և ոչ ազդեցութիւնը, ողորմելի միջնորդի դեր էր կատարում, այդ երևում է նրա տուած զեկուցումներից և կատարած դեսպանութիւնից (№ 202, 208 և 212), որոնց միջոցով սակայն երկու նշանաւոր գործ կատարեց ուսս կառավարութիւնը, նախ հայ իշխաններին և վրաց խանին պատրաստեց պարսից դէմ և երկրորդ՝ ստոյգ տեղեկութիւններ ժողովեց և նպատակադարմար ծրագիր կազմեց պատերազմի համար: 1721-ին վերջացաւ Շուսեպան պատերազմը և Պետրոս մեծը ձեռնարկեց պարսից արշաւանքին: Լեզգիների յարձակումն Շամախու վրայ 1721 թ. լուս առիթ էր պատերազմի ինչպէս յայտնել էր ուսաց Վոլինսկի դեսպանը: Պատերազմն սկսել էր հայոց և վրաց 30 հազարից բաղկացած զօրքը Վախթանգի հրամանատարութեամբ: Եսայի կաթողիկոսը 1722 ին (թ. 213) յայտնում է կայսեր, որ հայերը պատրաստ ունեն 40 զօրք և երբ կայսերական զօրքն երկի Շամախում նոյնքան ևս պատրաստ են ոտքի հանելու: Վայսրը նոյն թուի օգոստոսի վերջին գրաւեց Դերբէնդը, բայց փոթորիկը արգելք լինելով պաշարի տեղափոխութեան, կայսրը յետ քաշուեց Աստրախան բերդապահ զօրք թողնելով Դերբէնդում, իսկ հայ վրացական բանակը Գանձակի մօտ սպասում էր ուսաց զօրքին: Եսայի կաթողիկոսը նկարագրել է այդ ժամանակի դէպքերը, որոց անյաջող ընթացքը խանգարեց բոլոր գործը: Վախթանգը Գանձակի մօտ սպասում էր կայսերական զօրքին, որի փոխանակ լուր առաւ թէ կայսրը վերադարձել է և որովհետեւ պարսիկներն արդէն տեղեկացել էին բրիտան-

նեաների նպատակներին, ուստի սպառնական դիրք բռնեցին: Վախթանգի պահանջմամբ Եսայի կաթողիկոսը Ղարաբաղից 10,000 զորք ժողովեց և եկաւ միացաւ վրացոց հետ, սակայն զուր սպասելով օգնութեան՝ Վախտանգը ստիպուեցաւ տեղի տալ և փախչել Մոսկուա 1723 թուին:

Պարսկական պատերազմը յետաձգուած էր, բայց ոչ թողնուած, ուստի և 1723 թ. յունիսի 8-ին Հայոց ազգին ուղղուեցաւ այն նշանաւոր հրովարտակը (№ 207), որով պաշտպանութիւն է խոստացուում հայոց և յոյս է տրուում ապագայի համար, այս թղթի հայերէն թարգմանութիւնը (228) առանձին բերանացի խոստումներով հաշորդուում է հայոց Իւան Վարապետ կոչուած հայի միջոցով: Այս յանձնարարութեանց մէջ կար և հայերէն Ռուսիա բնակութեան համար հրաւիրելու յանձնարարութիւնը (№ 230): Նոյն թուականին ռուսական զօրքերը գրաւում են Գիւանը, Մազանդարանն և Բագուն, մի խօսքով կասպեան ծովի եզերքը: Ցաճիկները խառնուելով գործին՝ կամենում էին խանգարել ռուսաց յառաջխաղալը. երկարատեւ բանագնացութիւններից յետոյ միայն 1724 թ. դաշնագրութեամբ կուր և Երասխ գետի խառնուելու տեղը ճանաչուեցաւ սահմանագիւղի ռուսաց, տաճկաց և պարսից:

Հայոց վերջի ժամանակի պատմութեան մէջ գեղեցկագոյն երեսներն են այն մաքառման նուիրուածները, որ ունեցան հայերը պարսից և տաճկաց հետ մինչև ռուսաց գալուստը, այս ժամանակին է վերաբերում և հայ հերոս Դաւիթ-բէգը ¹⁾: Նեղն ընկած հայերը դեսպաններ և թըղթեր էր, որ ուղարկում էին Մոսկուա, սակայն բացի յուսադրութիւնից ոչինչ չէին ստանում մինչև մեռաւ մեծ կայսրն (1725 թ. յունուարի 28-ին) և հայերը մատուցեցան բոլորովին մահմետականների գաղանութեան: Միակ օգնութիւնը որ մեծ կայսրը կամենում էր անել հայերին, այն էր որ հրաւիրում էր նրանց գալ և բնակել Շուրջկասպեան նոր նուաճած երկրներում, որից հայք հրաժարուեցան:

Հայոց վիճակն անտանելի էր տասնամեայ շրջանում, որ

¹⁾ Ցե'ս Պետրոս դի Սարգիս Գելանենցի յիշատակարանը „կուռնկ“ տմադրի 1863 թ. եւ Ընտիր պատմութիւն Դաւիթ-բէկին. 1871. Ս. Էջմիածին:

հետևեց Պետրոս մեծի մահուան (1725—1735), ռուսաց կառավարութիւնը տաճկաց երկիւղից պատերազմ չէր կամենում հրատարակել, չէր վստահանում և զօրքով օգնելու հայերին, բայց միշտ յուսադրում էր նրանց, որ ձեռքից բաց չի թողնի պոպուսի դաշնակիցներ, հայերն ևս տածում էին այդ յոյսը քանի որ Շուրջկասպեան երկրները ռուսաց ձեռքին էին, սակայն նրանց յոյսը թուլացաւ, երբ ռուսները Գիւլանը յետ դարձրին պարսից: Կատարինէ Բ. կայսրուհին աջքամող չափաւ կովկասեան խնդիրը, բայց գործ սկսելով վրաց հետ հիասթափուեցաւ, միանգամայն և տաճկաց դէմ կռուել ստիպուած լինելով՝ անտես արաւ Ղարաբաղի հայերի խնդիրը, որոնք իբրեւ ամրապինդ պատուար կանգնել էին տաճկաց առաջ և արգելեցին նրանց ընթացքը դէպի Կասպից ծովը: 1784 թ. վրաց Հերակլ Թագաւորը մտաւ ռուսաց հովանաւորութեան տակ և ռուսաց մի փոքրիկ գունդ մուտ գործեց Թիֆլիզ: Ղարաբաղի հայերը այս միջոցին մեծ նեղութիւն էին կրում Շուշու Իբրահիմ խանից, ուստի նրանք կրկին դիմեցին ռուսաց կայսրուհուն, որ խնդիրն յանձնեց իւր սիրելի Պաւլովնա իշխանին, որի մերձաւորներէն էր Յովսէփ Արզուման եպիսկոպոսը: Այս բանակցութիւնների մասին տեղեկանալով Իբրահիմ խանը ինքն էլ դիմեց ռուսաց և ցանկութիւն յայտնեց մանկու ռուսաց հովանաւորութեան տակ, բայց չը բաջալերուելով՝ ըսկըսաւ հայերին հալածել, դրա դէմ ելաւ Հերակլ վրացին ռուսաց զօրքով և հայ օժանդակ գնդով և յաղթեց, բայց երբ ռուս զօրքերը յետ կանչուեցան տաճկական պատերազմի պատճառով (1778), վրացիք և հայերը նեղն ընկան, մեղիքներից 2 իրենց ժողովրդով (500 ընտ.) գաղթեցին Շամքոր: Աղա. Մահմետ խանը զօրանալով այս միջոցին նուաճեց բոլոր ապստամբ խաներին, դրանց մէջ և Շուշու խանին և Հերակլին 1785 թ. երբ բանդեց և Թիֆլիզը:

Սրանից յետոյ յաջորդող դէպքերն արդէն յայտնի են, ներածութեանս արգոյ հեղինակն այդ դէպքերը գեղեցիկ կերպիւ հիւսել է մի ամփոփ պատկեր տալու համար և մենք հետաքրքրուողներին խորհուրդ ենք տալիս անձամբ կարդալ այդ ամփոփ պատմութիւնը մեր երկրի գրաւման: Քանի մի խօսք մնում է մեզ ասել հայերէն վաւերացութեան մասին:

Ը.

Հայերէն վաւերացիութիւնը համեմատաբար քիչ են, նրանք թուով 39 են և վերաբերում են դարձեալ նոյն ժամանակամիջոցին, այսինքն 1699—1732 թ.: Միակ հետաքրքրութիւնն, որ զարթեցնում են այս թղթերը, նրանց լեզուին է վերաբերում, բացի կաթողիկոսական մի քանի կոնդակներից, միւսները գրուած են ժամանակի աշխարհաբար լեզուով և տեղական արտասանութեամբ, առանց քերականական ուղղագրութեան: Համար 102 վաւերացիութիւնը որ վերւում յառաջ բերինք մի գաղափար է ապիս այդ մասին. ահա և մի քանի այլ օրինակներ: Այս թղթերից հնագոյնն է № 6, որի մէջ նկատելի է դեռ գրաբար գրելու ձգտումը. «Մենք մեծ հայեաստանեացս իշխանքներս և մելիքներս ի հեռիաստանէ իբրի մօտ գօլով արասուելով ¹⁾ և պաղատելով անկանիմք ի յոտս նազելի և ինքնակալ թգրիդ. մենք անարժանքս գրեցաք գիր քո օծեալ թգրիդ...»

1702 թ. գրուած է № 85 թուղթը ս. Էջմիածնից.

«... Ծաներուք մերայնոցս ազանց սիրեցեալդ մեր Մինաս վարդապետ և պարոն Իսրայէլ Օրի, կուխնդրեմք ի բարեբարէն յԱստուծոյ որ ձեր աշխատանաց վերջն բարի կատարէ. Ահա մերայնոցս ինչ խնդրածն ուղարկերիք եկն էհաս առ մեզ... Մէծ շնորհակալութիւն ունիմք հաւոց մեծի յօգաթուիչ արծփիս մերոյ պարծանաց, որ սիրով ընդունել է զմերս, ողջ լերուք ի տէրն: (Այս վերջին փոխաբերութիւնը նշանակում է, ուրախ ենք որ կայսրը ընդունեւ է մեր խնդիրը):

№ 98 թուղթը գրուած է 1703 թ. Ղարաբաղի մելիքների կողմից Պետրոս Մեծին, նշանաւոր է թղթիս յառաջաբանի նշանագրութիւնն, որ է.

Թ անդժլիս .: Մ .: Ճրդ, հւ, պսպ, լճդ Ժ աբ վրդ. պղբ. սոց.

Այս տողը ուսուներէն թարգմանութեան մէջ այսպէս է բացատրուած. «և ինչպէս Աստուած թողեց հրեշտակների

¹⁾ Ինչպէս տեսնում է ընթերցողը առիդ գրութիւնը ոչ պ. Աղայեանի եւ ոչ պ. Արասխանեանի դիւան է, ամենայն ժամանակի լեզու չիմացողները միակերպ թշնամի են ուղղագրութեան:

9 դասը և եկաւ որոնելու 10 (արդեօք տասներորդ) կորած դասերը, այնպէս և դու, ով թագաւոր, բոլորովն թեմամբ գտիր և փրկիր մեզ, և ինչպէս թուխս հաւը պաշտպանում է իւր ձագերին, այնպէս էլ դու, ով արքայ, պաշտպանիր մեզ և եղիր մեզ վահան և պատուար ազատութեան»:

Ահա ժամանակի գիտնականութեան մի խղճուկ ապացոյց:

Մեղեքների գրածները աւելի մօտիկ է աշխարհաբարին № 100. «... Որ մեր այժմուս չեմք կրեր. բոլորութեմբ. փոխարէնն հառցենք, կու խնդրեմք ի բարերարէն այ. որ ժամկն. շատ անէ որ այս բանս կատարի, որ մենք մեծ բեղի լախս պրգւք. բոլոր. բարութեան փոխարէնն լցուցենք. աւելոր...»

№ 264 բոլորովին գուհակահան լեզու ունի.

«էս նումարով գիրս որ տվինք որ ֆերում պայել է համապ որ լիզվով խօսէք տէր Անտոն բէֆխայ չալարի.

1. «Առաջինն էս որ մեծ ինփրայթօռն Հայոց քօմակ աղարկելն և տեղն յիստակելն և նոցայ պախելն չարգիլէ. էս ջաթտան որ մեծ ինփրայթօռն օսմանլովին խէտ հաշտութիւն ղօվլամայ ունին...»

1725 թ. գրուած № 273 թուղթն արդէն բոլորովին կանոնաւոր աշխարհաբար է. «բանի ամիս է որ ձեր հրամանք գնացել էք. մենք մնացել ենք տեղ» որք և անտէր. որպէս ոչխար առանց հովուի. մնացել ենք բազում գայլոց մէջ, ամբ մէկ կողմ ցիր և ցան արարին չորս գողմներս, անօրէնք են, մեզ և մեր օրէնքին թշնամի և հակառակ են...»

Ուշադրութեան արժանի է ձեռն «մենքը», որ համապատասխան է «մոռնբալ» այժմեան գաւառական ձեռն, որ գործ են ածում Ղարաբաղիք:

Յաւելուածների մասին արդէն իսկ յիշատակել ենք, այդ երկու հատուածներն ևս արժանի են հայ ընթերցողների ուշադրութեան. Գուվէայի պատմութիւնից հայոց վերաբերեալ հատուածը թորգմանեցինք հայ ընթերցողների համար, ինչպէս և Սէն-Մարտէնի յիշատակագիրն, որ ցանկացողը կը գտնէ «Լուվայ»-ի այս համարում: Յայանի է որ Աղուանից կաթողիկոսները իրենց ձեռնադրութիւնը Շիղա

առաքելից են համարում, որ եօթանասնից մէկն է և ոչ իսկական առաքեալ, այդ անունը ռուսերէն թարգմանութեան մէջ ՕՒՄԱ է գրուած, իսկ փակագծում ենթադրած է Թոմմա (ΘΟΜΑ ?). որ հարկաւ սխալ է: Առանձին ուսումնասիրութեան, նիւթ են վաւերացնելու ըստ իրենց պատմական և աշխարհագրական բովանդակութեան, բայց այդ մի ուրիշ առիթի թողնելով՝ վերջացնում ենք մեր զեկուցումը, խորհուրդ տալով ամեն մի հայ պատմութեամբ հետաքրքրուողի ձեռք բերել այս գիրքն ու մերձաւոր անցեալի յիշատակների հետ ծանօթանալ:

Ն. ԹԱՐԱՄԵԱՆ

ՀԱՄԱՌՈՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՏՕՆԻՑ ԵՒ ԺԷՍԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔ. ՈՒՂԼ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Աշխ. Խորէն ա. քահ. Փէհլիվանեան. Կ. Պոլիս 1898.

Ով հետևել է մեր սարքերական թերթերին, անշուշտ լալտնի կլինի նորան, որ վերջին մի քանի տարում հեղինակ լինելու մի առանձին ցանկութիւն է նկատուում ոմանց մեր կովկասեան քահանաների մէջ և դա թէպէտև լիջեցնում է մեզ մեր բազմատանջ պատմահօր անմահ խօսքերը

«աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել. յառաջ քան զտեսութիւնն աստուածաբանք» սակայն և այնպէս մի թարուում էր մեզ այն համոզմունքը, թէ պարապելու ձգտումը, ուսման հոգին սկսել էր արդէն պահանջ դառնալ նոցա համար, որոնց կոչումը նոյն իսկ ուսում և գիտութիւն տարածելն է:

Այդ նորաբոյս հեղինակները չունենալով կարևոր պաշար ու պատրաստութիւն իրենց առաջացրած նպատակն իրագործելու համար՝ յաճախ վերցնում էին այս